ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3546-Ա « 29 » օգոստոսի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.ԿԱՐՊԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Հ.ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.70 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Հ.160 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.4046-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման N3 հավելվածի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգով, հիմք ընդունելով «Երևանի Հ.Սահյանի անվան հ.70 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի 2025 թվականի օգոստոսի 26-ի (հ.1 արձանագրություն) որոշումը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2025 թվականի օգոստոսի 28-ի հ.Ն/49804-25 զեկուցագիրը.

1. Դադարեցնել «Երևանի Հ.Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց», «Երևանի Հ.Սահյանի անվան հ.70 հիմնական դպրոց», «Երևանի հ.160 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ Արմինե Սոհրաբյանի լիազորությունները:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի «Երևանի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կազմերը հաստատելու, Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի հ.632-Ա, 2021 թվականի հուլիսի 22-ի հ.2596-Ա, 2597-Ա, 2598-Ա, 2599-Ա, 2600-Ա, 2601-Ա, 2602-Ա, 2603-Ա, 2604-Ա, հ.2605-Ա, 2606-Ա, 2607-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.4046-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման № 5-րդ հավելվածի 4-րդ կետի 4-րդ սյունակում՝ «Սոհրաբյան Արմինե» բառերը փոխարինել «Գրիգորյան Մարիամ» բառերով.

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետին:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ